



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### CASPSԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Հանրային Վարժարաններու մէջ Հայ Ուսանողներու Հարցերով զբաղող Յանձնախումբը, որ կը գործէ Արեւմտեան մեր Թեմի Ազգային Առաջնորդարանի հովանիին տակ, Երեքշաբթի, 14 Հոկտեմբերի երեկոյեան այցելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Յանձնախումբին կ'ընկերանար Ազգ. Վարչութեան նախկին անդամներէն՝ Տոքթ. Յակոբ Տեր Սկրտիչեան, որ այս յանձնախումբին մօտ Ազգ. Վարչութեան ներկայացուցիչն է: Առաջնորդ Սրբազանին կողքին, ներկայ էր Ազգ. վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան:

Յանձնախումբի անդամները շնորհաւորեցին Առաջնորդ Սրբազանը՝ չորրորդ շրջանի մը համար Թեմիս Առաջնորդ իր վերընտրութեան առիթով, ապա, ընդհանուր գիծերու մէջ զեկուցեցին Կլենտոյլի ու Նորթ Հոլիվուտի հանրային վարժարաններու հայ ուսանողներուն ու անոնց ծնողներուն տրամադրուած աջակցութեան մասին, նաեւ խօսեցան յառաջիկայ ծրագիրներու եւ անոնցմէ բխած կարիքներու մասին:

Առաջնորդ Սրբազանը եւ Ազգ. Վարչութեան ատենապետը գնահատանքով արտայայտուեցան CASPSի նուիրեալ ծառայութիւններուն մասին ու վերահաստատեցին Ազգ. Առաջնորդարանի գորակիցի ընթացքը:

Աւելի ուշ, յանձնախումբը ներկայացաւ նաեւ Ազգային վարչութեան ժողովին ու մանրամասն տեղեկութիւններ տուաւ իր աշխատանքի դաշտերուն եւ ծրագիրներուն մասին:

### PRELATE AND EXECUTIVE COUNCIL MEET WITH CASPS EXECUTIVE BOARD

On the evening of Tuesday, October 14<sup>th</sup>, the Executive Board of the Committee for Armenian Students in Public Schools (CASPS) visited the Prelacy where they met with H.E. Archbishop Moushegh Mardirossian and Executive Council Chairman Dr. Garo Agopian. Former Executive Council member and Prelacy representative to CASPS Dr. Hagop Der Megerdichian also participated in the meeting.

At the start of the meeting, the board members first extended their congratulations to the Prelate on his re-election. The discussion centered mainly on Armenian students attending public schools in Glendale and North Hollywood and the valuable support the committee receives from parents, as well as an update on upcoming projects the committee has planned.

The Prelate and Chairman commended the board members for their commitment to Armenian youth and reaffirmed the support of the Prelacy.

Later in the evening, board members briefly attended the meeting of the Executive Council to report to all the members the nature of their work and their mission.